



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ  
ԶՈՎՈՒՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ № 41

13 ապրիլի 2011թ

գ.Զովունի

ՈՐՈՇՈՒՄ ԿԱՏԱՎԱՐԻ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշմամբ սահմանված կարգի 6 և 20-գ կետերի և համայնքի ավագանու 2011թ. ապրիլի 6-ի N17 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մելանյա Մկրտիչի Կարապետյանին ուղղակի վաճառքով 0008-0045 կադաստրային համարով բնակավայրերի նշանակության այլ 200(երկու հարյուր)քմ հողամասը (որը կից է սեփականության իրավունքով իրեն պատկանող հողատարածքին) կադաստրային արժեքով վաճառել իրեն 1քմ 4524(չորս հազար հինգ հարյուր քսան չորս) դրամով, որը կազմում է 904 800 (ինը հարյուր չորս հազար ութ հարյուր) դրամ, նրա հողամասի ընդլայնման նպատակով, քանի որ նշված հողամասը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով, ներառված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և չի խախտում այլ անձանց իրավունքները:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր ԱԳԿ Եղվարդի ստորաբաժանմանը նշված հողամասերի պետական գրանցումը կատարելու համար:

ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ